



# ՄԱՅԻԿ

## ԿԱՆԱՆՑ ՅԱՏՈՒԿ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՇԱՐԲԱԹԵՐԹ

ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ

ԱՌՏԵՐՆ ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ, ՆՈՐՈՑԹ

ՉՆՈՍԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆՅ

ԿԱՆԱՑԻ ՀԱՐՑԵՐՈՒ ԵՒ ԱՇԽԱՐՀԻՆ ԻՐԵՐՈՒ



ԺԹ. ՏԱՐԻ

Նոր Նըջան, Թիւ 45



ՅՕԴՈՒԱԾՆԵՐ ՈՒՆԻՆ

ՏԻԿԻՆ ՉԱՊԵՂ 2. ԱՍՏՏՈՐ

ՏԻԿԻՆ ՄԱՌԻ-ԼՈՒԻԶ

ՏՕԲԹ, ՕՅԵԼԻԱ ՆԵՐԿԱՐԱՐԵԱՆ

ՕՐԻՈՐԴ ԱՏՐԻՆԷ ՄԻՍԱՐԵԱՆ

ՕՐԻՈՐԴ ՄԱԹԻՆՏ ԱՍՏՈՒԱՅԱՏՈՐ

ՕՐԻՈՐԴ ՆԻՆԻ

ՕՐԻՈՐԴ ԱՐԱՔՍԻ Կ. ՊՈՏԻՊԵԱՆ

ԵՒ

ՀԱՅԿԱՆՈՅՇ ՄԱՌԻ



Գին 40 փարս

Տպագրութիւն ԵԱՂԻԿ, Կալաթա.

Տ.ՐԳՐԻԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՊՈՒՍՊՅ ՀԱՄԱՐ

Տարեկան 50 դրուչ. Վեցամսեայ 25<sup>7</sup> դրուչ :

ԳԱՆՍՈՒՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Տարեկան 54 դրուչ. Վեցամսեայ 27 դրուչ :

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒ ՀԱՄԱՐ

Տարեկան 12 Ֆրանք :

Մանուցման, բաժանորդագրութեան եւ թերթին վերաբերող ամէն կարգի գործառնութեանց համար զիմել մի՛ միայն՝

{زاغيك غزته سي}

در علمیه ده غلطه قورشونلی خاندنه نومرو ۷

Շ Ա Ւ Ա Թ Ա Թ Ե Ր Թ «Մ Ա Ղ Ի Կ»

Կ. Պոլիս, Ղալաթիա, Դուրչունլու խան, թիւ 7

JOURNAL "DZAGHIK,"

Constantinople, Galata, Kourehoum Han, N<sup>o</sup> 7.

Տ Ի Կ Ի Ն Զ Ա Պ Ե Լ

Վ Ե Ր Ա Դ Ա Ր Զ Ա Ծ

Զեւ ու կարի մէջ իր ունեցած համբաւով ծանօթ Տիկին ԶԱՊԵԼ, որ վերջերս Եւրոպա դացած էր նոյն ճիւղին մէջ իր ունեցած զարգացումը կատարելագործելու համար, Académie de Coupeի փայլուն մէկ վկայականով մայրաքաղաքս հասած է եւ երկու շաբաթ է ի վեր հաստատուած է Բերա, Մեծ փողոց, Սանթա Մարիա եկեղեցիին դէմ թիւ 418 աբարթըմանը, ուր մեծ արհեստանոց մը հիմնելով սկսած է յանձնարարութիւններ ընդունիլ արդէն իսկ, բազմաթիւ հարուստ ընտանիքներէ : Իր հետ բերած է նաեւ Եւրոպայէն ամառնային կերպասեղինաց ճոխ մթերք մը զոր իր յաճախորդունիներուն տրամագրութեան ներքեւ դրած է :

5-13

Կ Օ Շ Ի Կ Ի Գ Ո Ր Ծ Ա Ր Ա Ն

S. 3. FOLUPE TIT LNU.

Հ Ի Մ Ն Ո Ւ Ա Մ 1860 ի ն

Գրեթէ կէս դարէ ի վեր հանրութեան վստահութիւնը գրաւած կօչիկի եւրոպական այս մեծ գործարանը՝ որուն գլխաւոր մթերանոցն է ՄԻՄԻԱՅՆ ԲԵՐԱ, ՄԵԾ ՓՈՂՈՑ ԹԻԻ 401

կը հայթայթէ արանց, կանանց և տղայոց յատուկ զանազան տեսակ կօշիկներ որոնք իրենց շիքութեամբ և տոկունութեամբ կը գերազանցեն միւս նմանօրինակ վաճառատանց ապրանքները :

Անգամ մը զիմել բաւական է գոհ մնալու համար : 15-50

# ՇԱՂԻԿ

## ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

(629) ԺԸ. ՏԱՐԻ—ԹԻԻ 45

13 ՅՈՒԼԻՍ 1906

Հաճոյքը ունինք հրատարակելու հետեւեալ սիրուն և ինքնատիպ արասանութիւնը՝ զոր գրած է Տի. Գ. Հ. Ասատուր Էստեան վարժարանի վերջին հանդէսին մէջ շրջանատուհոյ մը արտասանութեան համար:

### Հ Ր Ա Ժ Ե Ծ Տ

Ս Ի Ր Ե Լ Ի Զ Ո Յ Ր Ե Բ



ՐԱԺԵՇՏԸ բառ մ'է, բացարձակ հրաշք,  
Արցունքի, ցառի գոր չեմք ճանչնար դեռ.  
Բաժանման, շքեման հետքեր ապաքեն  
Զոյգ զոյգ կ'ընթանան անոր ետեւեն:

Բայց իմ այհերչս արցունքով չեմ բաց,  
Միտքս կը թռի սուր արագընթաց  
Ինչպի ծիծաղկոս երագս իմ վարդէ,  
Որուն շատերն իսկ սիրոյս կը կարքէ:  
Եւ ձեզմէ, ֆոյրե՛ր, բաժնուած պահուս,  
Երբ պե՛տ է որ շա՛մ, հեծկըջաւ անյոյս,  
Կը յիշեմ թէ ի՛նչ պարտքեր զանազան  
Կը պատրաստեն ինձ կեանք մը սրբազան.  
Կեանք մը զոր վարեչ մեզի ուսուցին  
Ուսուցիչները թոյր զըպրոցին:

Մի՛ կարծե՛ք սակայն թէ ցընորհներ խօշ  
Արագ ինչպէս հող, թէքէ ինչպէս հող  
Մըսիս մեջ կուգան կ'անցնին անկայուն.  
Չունի՛մ ես բընաւ իդձեր մեծ, անհո՛ւն:  
Ինչ որ կ'երագե՛մ, պարզ է եւ դիւրի՛ն,  
Եւ կը պասշանի աղջըկան դերին:  
Ես կ'ըզձամ որ երբ մեկնի՛մ դըպրոցէն,  
Չերբ թըռչուն թըռած իր մօրը ծոցէն՝  
Չը ճախրե՛մ երբեք օդին, անպի՛ն մեջ  
Գրեցե՛ղու համար արեւներ անշեջ:  
Այլ պիտի մըսնե՛մ շիտակ խոհանոց.  
Պիտի արդուկե՛մ սառան ու սփոռոց,  
Պիտի ֆարոգե՛մ բոյոր աղջըկանց  
Թէ աշխատութեամբ կ'ըլլանք գերագանց:  
Պե՛ս է մեր սորվածն ըլլայ օգտակար,  
Ոչ թէ փորձանք մը մեր սանը համար:  
Թէ մե՛նք հոս ըմբի եւ Ծիզիք ուսանք  
Պե՛ս է անոնցս հանենք հըրահանց  
Մ'որ մեր ըսպաններն, շարե՛ն ու վերմակ  
Չիւնի պէս մաքուր ըլլան ու ճերմակ,  
Եւ մեր ասեղով աշխոյժ, գործունեայ  
Պե՛ս է մեր տունը յաւե՛ս պարծե՛նայ:  
Թէ թիւ եւ հաշիւ հոս սորվեցանք մե՛նք,  
Պե՛ս է մեր սանը ծախտերը ֆենե՛նք.  
Հինգ փարայ միսէն, մէկ փարայ հացէն  
Տան մեջ, շատ անգամ, բացեր կը զոցե՛ն,  
Եւ տընտեսագիտ հընոյ ձեռքին տակ  
Աւագը ոսկի կ'ըլլայ, խի՛նն ըստակ:  
Երբ սորվեցանք գործածել վըրձին,  
Գոյներն իրարու խառնել յուսածին,  
Թէ ծիածաններ վարդի, կանանչի  
Ի՛նչ ծիւ կը փըրքին ձեռով կակաչի  
Մ'եր մասներուն տակ ձեռերով ճարտար,  
Պե՛ս է մեր տաղանդն ընենք օգտակար,  
Եւ գեղագումայիկ փունջերով դեզ դեզ  
Պըճնենք գարդարենք մեր տունն ու պարտեզ:  
Թէ մե՛նք հոս դաշնակ ու երգ սորվեցանք,  
Չանանք որ չըլլայ ասիկա յանցանք:  
Չըլլայ որ անտուն դաշնակի՛ն առջին  
Մ'ասներնիս մարդենք մեղովիկ եւ ու՛ղիկ,

Խեղճերնիս ջրամ Շորեկին, Լիսյին,  
 Մինչդեռ մայրերնիս, հե՛ք սարիֆոս կին,  
 Խոնամանցին մեջ իր մեկջը ծրուած  
 Սընթուկ կը սապիե կըրակին դիմաց:  
 Մենք առոյգ եւ բարձ աղջիկներ զըւարթ,  
 Ոչ ոյժ եւ ոչ կամք կը պակսի մեզ արդ.  
 Եթէ զըշուխնիս ըշայ շուրջ, խոհուն,  
 Անշուշտ մեր ճիգէն կ'օգտուի մեր տուն,  
 Եւ աչ չեն շներ թէ աղջկանց համայն  
 Ուսումն անօգուտ պերճանք մ'ե միայն,  
 Եւ մեր դըպրոցը, կըրթիչներն ամեն  
 Իրենց սերմանամ հունձֆը կը ֆաղեն:  
 Աշպակս մենք կըրնանք յայտնել երախտիք  
 Անոնց որ ըրին մեզի թիւր բարիք,  
 Եւ որոնց անունն անմահ ու անգին  
 Մեր սիրտերուն մեջ միշտ պիտի ապրին:  
ԶԱՊԷԼ Է. ԱՍՍՏՈՒՐ

## ՊԶՏԻԿՆԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆԸ

Թերեւս չկայ վայր մը աւելի հանդուստուէտ՝ քան չողեհնաւու  
 մը լայնանիստ սրահը՝ ակնարկներով զիրար չափչփելու, և կամ,  
 ձանձրոյթէ մղուած զիրար ուսումնասիրելու, տիրող խօլ մօլ խօս-  
 սակցութիւններէն դատուելով. մանաւանդ, երբ բան մը չունի մարդ-  
 հետը կարողալու:

Առաւել կամ բնաւ հետաքրքրութիւն ունենալ կը զգամ, մա-  
 նուկներով զբաղելու, երբ մանաւանդ այսօրինակ առիթներ պա-  
 րապ միջոց մը կուտան ինձի:

Սրահը իր խանդավառութեան մէջն է. և ոչ ոք իրաւունք  
 ունի դիմացինին քիչ մը աւելի սուր քրքիչներուն դպչելու, քանի  
 որ ուրիշ կերպով ինքն ալ իր պոռոհահան կը բերէ խառնել ա-  
 նոնցին մէջ: Կատարեալ իրարանցում մը զուարթութեան, Կանայի  
 կիսաաքող ասղնուքներ, այրական երջանիկ միջամտութիւններ.  
 ամէն թեթեւ բան իր տեղը ունի:

Եւ սակայն ամէն ինչ սովորական է: Թերեւս միակ փոփոխա-  
 կան երեւոյթը կանանց արտաքին պաճուճանքին չազփազիտուն և  
 բանդատորումն է, որուն մէջ կը ծփայ ամէն զայն իր մաժեղոյին  
 միակեօղը:

Կ'անդրադառնամ երկու պզտիկ աղջիկներու գգուելի բարեկամութեանը, նորոշաց ունակութեան մը համեմատ, որովհետև, ինչպէս ըսի, բաւական ատեն է որ կը հետաքրքուիմ անոնց պզտիկ բարեկամութիւններով :

Ականջ կը դնեմ իրենց անորոշ խօսակցութեանց : Այդ արծաթէ ձայներուն մէջ առաջին շեշտը որ տկանջիս կը դարնէ, անոնց պզտիկ կիներ ըլլալուն ցոյքն է : Մէկը՝ հազիւ 8 տարու՝ սպիտակ մետաքսեղէն հագուստ մը կը կրէ, թուաններով ճոխաղարդարուած, և համեմատական պարծենքութեամբ մը կը ցուցնէ իր շքադարչեայ հանդրիճումները իր հազիւ 9 տարեկան խօսակցուհոյն՝ որ երկնադոյն շղարչէ արդուզարդին մէջէն դժուարահաճ աչուկներով անոր մեծամատութիւնները կը չարիէ, ազնուական կնոջ մը ձեքձեքումները փորձելով :

Իրենց խօսակցութիւնը, դուցէ կապկութիւն մը, ընդօրինակութիւն մը իրենց մայրերուն : Տեսնելու բան է որ այդ պզտիկ սչրասէրները ինչպէս կը քննադատեն իրենց կարուհին, որ հակառակ կամքերնուն երկու մասն երկայն բունած է իրենց շրջազգեստին վարի ծայրը և ժանեակներով չէ խճողած թեզանիքները, արմուկէն . ժայռէնները աւելի առատ հանգստցնելու կազմած իրենց վիզերուն բացուածքին վրայ և չեն ծփծփար հովուն դէմ :

Ուրիշ կերպով բսելու համար, տեսակ մը ֆոխքներ են այդ երկու մատաղ հրեշտակները, որոնց անվերջ ու սնտիառ պատմութիւնները սուսի հազուսաներուն համար, ախորժը կը դրդուեն իրենց մանաներուն՝ ունկնդրութեան :

Կը տեսնեմ որ պահ մը մէկզի ձգած իրենց խօսակցութիւնները՝ բերանարաց և ժպտազին անոնց կը հետեւին երկու պչրաբոյր մայրերն ալ, որոնք ծնունդ տուած են այդ պզտիկ սչրուհիներուն, եւ քաջալերող միջամտութիւններով անոնց ճաշակը կը փորձեն ներկաներուն վրայ :

Ինչ պիտի խորհէր արդեօք նոյն պահուն պարզասէր մայր մը . բայց մէկ հաստ մը գոնէ չտեսայ այդ ամէնուն մէջ :

Առանց չափազանցութեան կարելի է բսել որ յիշ ատենէն արդուզարդի համար հոգի առողջ հիւանդկախ սերունդ մը պիտի ունենաք, ո՛րքան մայրեր շարունակեն իրենց մեծամատութիւնները փորձել հէք մանուկներուն վրայ, կանխահասօրէն թունաւորելով զանոնք սին կոչումի մը աւելով : Շատ սովորական չէ՞ փողոցները կամ այլուր հանդիպել պզտիկ աղջնակներու՝ որոնք ամուսնացած կնոջ մը կրելիք արդուզարդով սէգ՝ հպարտ քայլերով՝ իրենց մայրերուն նմանիլ կը փորձեն, որ իր կարգին ծախու անուած ազնուականութիւն մը կը կեղծէ :

Խեղճ այլ միամիտները, որովհետեւ չեն կրնար իրենց պղտիկները ճշմարիտ դատաւարակութեան մը խելութեամբ օժտել, կը ջանան արտաքին կեղեւով մը պաճուճել զանոնք, ինչպէս են իրենք, և ատով ոչ միայն բարոյապէս կը մնասեն անոնց՝ այլ և ընտանիքին նիւթական պիւտճէին ալ ծանր կշիւքներ կու տան, եւ կը վարժեցնեն զանոնք ազագայ շուայլ տանտիկիները ըլլալու: Եւ եթէ իրաւ է որ մօր մը տիպարը լաւագոյն ազգակին է իր զակին՝ այն ատեն շատ բան չսպասենք այսօրուան դեռածիլ պէպէսներէն՝ որոնք վաղուան սերունդը պիտի կազմեն:

ՀԱՅԿԱՆՈՅՇ ՄԱՌՔ

## ԲԱՐԻՉՈՒՅԻԻ ՄԸ ՆԱՄԱԿՆԵՐԸ

### ԱՌԱՋԻՆ ԲԺՇԿՈՒՅԻՆ ՄԱՂԸ

Ճ Ե Ռ Ք Ե Ր ՈՒ Ն Գ Ա Վ Տ Ն Ի Ք Ը

Բարիւ, 16 Յուլիս 1906

Մառի Բիւթման այս օրերս մեռաւ նիւ-Նորքի մէջ, ուր կը կար տարիներէ յաջողութեամբ ի գործ կը դնէր իր արհեստը, բժշկութեանը: Մառի Բիւթման, որ անգլիական ծագում ունի, Բարիզի բժշկական կաճառէն վկայական ինդրոզ առաջին կինը եղաւ: Իսկ առաջին Պրանսուէին որ բժշկութեան վկայական ձեռք բերաւ Մատրլէն Պրէսն էր: Ան 1875ին անցուց քեզը և ստացաւ խիստ քաջալաւ նշը՝ իր նշանակելի աշխատութեան համար, որուն նիւթն էր դիտեցում:

Սոսկայի եզան ուսման առաջին տարիները այս յանդուգն ուսնորային, որ սակայն իր նախաքայլերուն մէջ պաշտպանուեցաւ Էօթէնի կայսրուհիէն:

Մատրլէն Պրէսի գեղեցիկ օրինակը իր շարունակութիւնը ունեցաւ և այս պահուստ, Պրանսայի մէջ հարիւրեակ մը բժշկուհիներ կան որ կը գործեն: Ասոնք ամէնքն ալ փայլուն քննութիւններ անցուցած, շահեկան և յաճախ ինքնատիպ քեզեր ունեցան, ընդհանուր կերպով հիանալի աշխատողներ եղան, բայց ամէնքն ալ հեռու են իրենց տոկուն աշխատութեանց պտուղները քաղելէ:

Քանի մը տարի առաջ հետաքրքրութիւնը ունեցայ հարցաբրն-

նելու այս դիւցազնուհիները որոնք այնքան արժանի են յաջողութեան, և կարճ հարցութեամբ մը մէջ ինքրեցի թէ, —

«Բժիշկ կինը երջանիկ է: Եթէ նորէն սկսելու ի վիճակի ըլլայիք, ինչ պիտի ընէիք:»

Խոստովանութիւնները սուսուկ կամ նուազ անկեղծ եղան, բայց անոնցմէ սա ճշմարտութիւնը ելաւ զոր դիտէի արդէն: Սա թէ, բժիշկ կնոջ ճակատագիրը, դրամապէս խօսելով, շատ բաղձալի չէր. բայց ընդհակառակը մաքառող գեղեցիկ եռանդ մը կը յայտնուէր ամէնուն ալ բերնէն, պատասխանելու հարցումին երկորդ մասին:

Այո՛, այո՛, հարիւր անգամ այո՛, պիտի վերսկսէին իրենք այդ կեանքը, այնպէս ինչպէս արդէն ուղած էին, աշխատութեան ուրախութիւններուն համար որ լաւագոյն բան մըն է, և այն մեծ երջանկութեան համար, զոր յաճախ կը վայելին մեղմելով տառապողներու գոբաղդութեանը, կարեւրէր սիրտերը և ոգեսպառ մարմինները, ամբողջ ախուր և եղկելի մարդկութիւնը:

Ահա ինչ որ յիշողութեանս կը ներկայանայ, լսելով մահը այն նշանաւոր կնոջ, առաջին ժամերու այս պայքարողին, Մառի Բիթմանի:

\* \* \*

Ձեռնահմայութիւնը հին արուեստ մըն է, որ սակայն կ'երեւի իր այժմէութիւնը կորսնցուցած չէ: Ձեռքէն, մատներէն և եղունգներէն կը կարդան մարդուն նկարագիրը: Ահա զորմ մը որ արհամարելի չէ շիտակը որովհետեւ սակից ետք դիւրաս պիտի կրնանք որոշել մինք մարդիկը, երբ իրենց ձեռքը թոթուելու պահուն, պահ մը քննենք զանոնք:

Տիկին տը Թէպէս, այս արուեստին սիրահարներէն մէկը, վերջերս յօգուած մը գրեց այս նիւթին վրայ, որ անուստիկ. —

Ձեռքերուն մէջ ամէն ինչ կը տեսնուի, ամէն ինչ կը կարգացուի: Ամէն ինչ ըսելով կը հասկնամ կեանքը: Ֆիզիքականն ալ, բարոյականն ալ: Առողջութիւնը, սիրտի, միտքի, իմացակա՞նութեան յատկութիւնները, և աւելին՝ ձեռքերով, ձեռքերուն օժանդակութեամբ կարելի է գուշակել ապագան, որովհետեւ, հիները դիտած էին որ այսինչը, այսինչ նշանը ունենալով ձեռքին մէջ, այսինչ բանին ենթակայ է: Աւանդութիւնը մեղի բերաւ այս դիտուած պարագաները՝ զորս նորերը վերաքննեցին ցին, և այսօր դիտենք թէ մարդ այս գիտութիւնէն օժանդակուելով, ո՛րչափ կրնայ ինքզինքը ուղղել դէպի երջանկութիւն:

Ինչ որ ամէնէն առաջ աչքի կը զարնէ, ձեռքին ծուալն է:

Մեծ է, միջակ կամ պզտիկ: Բայց այսպէս կամ այնպէս ըլլալը նշանակութենէ զուրկ չէ: Ազլիկ հասկնանք: Ամէն ինչ համեմատական է և ձեռքն ալ պէտք է համեմատական ըլլայ մարմինին: Մանկական ձեռք մը հսկայի մը բազուկին ծայրը, ծաղրելի պիտի ըլլար:

Լաւ յօրինուած, մարդուն հասակին հետ լաւապէս համեմատական ձեռք մը կը յատկանշէ միտքի ու սիրտի գեղեցիկ հասասարակչութիւն մը:

Մարմինին միւս մասերուն բազտատմամբ շատ կարճ ձեռք մը կ'ըսէ կ'ըսէ թէ իր տէրը գէշ նկարագիր ունի: Իսկ երկար ձեռք մը, կը յայտնէ թէ տէրը մոլի է, խորամանկ, անյագ:

Երկայն ափ մը խոշոր կարճ մատներով ցոյց կուտայ ծուլութիւն, թեթեւութիւն, անտարբերութիւն:

Նեղ ափեր, նուրբ ձեռքեր, օ՛հ աս դէ՛շ ձեռքերը...: Նկարագիրը բծախնդիր է, անտանելի, բռնաւորական: Այս տեսակ ձեռքերով օժտուած կին մը տան մէջ ժանտախտ մըն է, եսասէր, սիրական, շատախօս, ազահ... և ամէն բան:

Խեղճ ամուսիններ՝ զգուշացէք, դեռատի աղջիկներ՝ ուշագիւր եղէք: Բննեցէք այն որ իբր ամուսին կը ներկանայ և մի՛ ընդունիք Ատոնիս մը որ վրդովիչ նշաններով ձեռքեր ունի:

Մտտ, լաւ յօդաւորուած ձեռք մը երկար կեանք մը կը յատկանշէ: Կեանքը յանկարծ կը սպառնայ կարճընալ երբ ձեռքը փոս է և գէշ շինուած:

Պէտք է նաեւ նկատի առնել գոյնը որ առողջութեան մասին օգտակար նշաններ կը ցուցնէ:

Ճերմակ, թափանցիկ դոյնը նշան է բնութեան տկարութեան, թուլութեան և անտարբերութեան:

Վարդագոյն ձեռք մը՝ ուր երակները թեթեւակի կ'երեւին կը նշանակէ լաւ առողջութիւն, բարութիւն, սրամտութիւն:

Շատ կարմիր ձեռքերը՝ գէշ խուճուածք և անյաղթելի ծուլութիւն:

Կանանչորակ ձեռքեր՝ հիւանդութիւն, բարկութիւն, չարութիւն:

Լաւ ձեռք մը պէտք չէ ըլլայ շատ ձերմակ, այլ թեթեւակի պիտակուած վարդի գոյներով:

Համաչափութիւնը միշտ լաւ նշան է, ինչպէս ձեռքին՝ այնպէս ալ մատներուն մէջ: Եթէ մատները չափաւոր մեծութիւն մը ունին կը յատկանշեն ուղիղ բնութիւն մը: Երբ փոքր և նուրբ մտաւոր հիւանդութեան սպառնալիք մըն են: Մուռ մատներ որ իրենց մէջտեղը պարապ կը ձգեն, անխտանութիւն կը ներշնչեն:

Իրենց տէրը 100ին 90 շատախօս է, սնապարծ, հեղնող, անխորհուրդ, եսասէր, շռայլ, որ կոչուած է կեանքը թշուառութեան մէջ վերջացնելու: Եթէ մատները դէպի վեր կը դառնան, ուշադրութիւն տէրը ձարվիկ է խորամանկ ըլլալու ստորձանս և կրնայ մինչև իսկ խարվութեան մղուիլ: Բխամատը նայեցէք մանուսնդ: Եթէ շատ երկայն է, կամքի և ուղղութեան պատուական նշան մըն է, եթէ կունտ է զգուշացէք, այդ ըթամատին տէրը յամառ է, կատարի և կրնայ ինքզինքը կորսնցնել՝ ոճիրի մղուելու ստորձան:

Անփոյթ մի՛ անցնիք եղունգներուն վրայէն ալ: Դիտեցէք անոնց գոյնը, երկայնութիւնը, լայնութիւնը:

Երբ եղունգները վարդագոյն և սիրուն ձեւով մը ըլլան, կը յատկանշեն հաստատամտութիւն և արիւթիւն: Երբ սրածայր եւ ծուռ՝ չարութիւն, այս պարագային կը յատկանշէ նաեւ թէ ենթական գէշ թոքեր ունի: Ոլորած և նեղ՝ նշան են ազահութեան, սեւ, տժգոյն և կլոր՝ շատ գէշ նշան մըն է, զայն կրողը է կամ կրնայ վտանգաւոր ըլլալ:

Ներմակ կէտերը երջանկութիւն մը կը համարուին: Սովորաբար կ'ունենան ծայրայեղ ջղայինները:

Կարծ և կարծր եղունգները նշան են բարկութեան և երկար կեանքի. միայն կարծ՝ պայքարելու և ծաղրելու սէր: Փոքր եւ միս քալած իրենց մէջ՝ կը յատկանշէ չափազանց զգայնութիւն մը:

Ահաւասիկ զբաղում մը ձեղի, ալ սկսեցէք իրարու ձեռք, սփ ու եղունգ քննել, հասկնալու համար նկարագիրները:

ՏԻԿ. ՄԱՌԻ 1,01ԻԶ

## ԱՂՋԿԱՆ ՄԸ ԱՍՊԱՐԷՋԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Իգական սեռին կեանքին իտէալը, երազն ու տենջն է ամուսնութիւնը: Մայրերուն մտասեւեռումն է իրենց աղջկան համար փեսայ մը գտնել: Գաւառներու մէջ երբ աղջիկ մը լոյս տեսնէ, այդ օրուընէ իսկ մայրը ձարձարակ կ'ընէ օժիտ պատրաստելու, տարուէ տարի մտուկը ուսնայնելու: Հապա ի՞նչ կ'ըլլայ աղջիկը՝ նէ պարզապէս ժամանակ կը սպառէ, կը սպասէ, որպէս զի տարին 13-15ը լրացունէ, ու դաշտին մէջ կալ ըրած միջոցին իրեն աչք ըրած սեւ աչուի պարմանին ղինքը կնութեան առնէ... «և ամենայն ինչ կատարեալ եղեւ»:

Քաղաքներու մէջ տարրեր է սակայն: Աղջիկը դպրոց կը յա-

ճախէ, դաշնակ կը զարնէ, լեզուններ կը խօսի, յարմար առիթին այս չքնադութիւններով պարծելու: Այս նապիւրաչուք օրիորդը զգլխամ «ութիւնչներու աւելաւելի զանազանութիւններէն, յաւաջդիմութեան անըմանքէն թուուած, կը հմայուի, կը վերանայ, կը սաւառնի կիկերային կոհակներու մէջ, և... օր մըն ալ յանկարծ այդ վերացական բարձունքէն զգաստութեան կը կոչուի, վկայական ի ձեռին վար կը դլտորի աշխարհի անջրպետին մէջ, ու ինքզինք կը գտնէ միս մինակ:

Այն ատեն իր առջեւ կը պարզուի աշխարհ մը լի ասպարէզներով. չէ՞ մի որ ինք արդէն բաներ մը որոշած էր. արդ ժամը հասած է ընտրութեան:

Գերձակունի՞ ըլլաւ. — Օ՛հ ինչ տափակ արհեստ, մեքենային միտքը որքան հակասական է բարձր գաղափարականիս կոչման:

Վարժունի՞ ըլլաւ. — Ուրկէ՞ ո՛ւր, չյղկուած մտքերու հետ շփուել պարզապէս նըրացած ջիղերու անհանդուրժելի է. և թագականը, հոգաբարձուն, տեսուչը անտանելի՛ են:

Երածի՞ջս ըլլաւ. — Բաղձալի խտէալ. ա՛հ, արդէն իսկ կը գգամ թեղերուն մեկամաղձատ նուրբ թրթուումները իմ յուզեալ սրտիս ալքերուն մէջ, և միթէ քիչ ծափե՛ր խլեցի ռօմանսը զարկած ատենս: Ինչո՞ւ. արդեօք. ա՛հ, Գերմանիան միայն յարատեւ աշխատութեանը զիս երածիչտ պիտի հոչակէ:

Նկարի՞չ ըլլաւ. — «Տաղանդ ունիս» կ'ըսէր ուսուցիչս. այժմ պէտք է փայլիմ: (Ներկատուփը ձեռքը դաշտ կը վազէ). ա՛հ, ինչ հիանալի տեսարան, արշալոյսին ամբոյն շողերը հորիզոնին վրայ կը ծփծփան. ցորենները ոսկեայ գլուխնին սիզօրէն կը ճօճեն երկնակամարին կապոյտին տակ. թաւուտներուն մէջէն թռչնիկներ իրենց փոքրիկ կոկորդը գողաւորած, առաօտեան գոհարանութիւնը կը գեղգեղեն. անդին խուճը մը ոչխարներ կը մայեն: Աս ամէնը լաւ բայց ո՛ւրկէ սկսիմ, սա ծառէ՛ն, ի՛նչ, ինչո՞ւ... չեմ կրնար գծել, միթէ քիչ օրինակած էի ասանկ տեսարաններ: Ա՛հ, կը հասկնամ, Բարիդ միայն կարող է զիս արթիս ընել:

Գրագիտունի՞ ըլլաւ. — Սքանչելի կը շարադրէի. բնութեան, կանանչ գորգին, ճերմակ սաւանին վրայ, կապոյտ բնեղին վրայ կը սկսիմ թերթերու գրել, մարդիկ պիտի կարդան — ինչ — պիտի լափեն կտորներս ու, ու պիտի ներթողեն զիս, անունս բերնէ բերան պիտի «ճամձուի» Ալիիարի և Նինիի պէս, և ես պիտի անմահանամ: (Ու կը գրէ, սպասելով որ սպուռի և երբեք չի սպուռի: Չյուսահատիր սակայն, նորէն կը գրէ: Կը դարմանայ, կը զայրանայ, կը վհատի, և վերջապէս կը հետաքրքրուի՝ թերթ մը կ'առնէ, և ո՛վ երկին, յողուածներու իմաստը դեռ չէր կարող ըմբռն-

ներ : Ոստանաւորները խրթին կը զսնէ , և յուսահատ՝ յակամայիցս կը խելաբերի : Հոռմը կ'երևայէ իր անմահ զիցաբաններով , որոնք մոմին աղօտ լոյսին տակ իրենց ճաղատ գլուխը հակած՝ անքուն կ'աշխատին , տաքին և պաղին և անգիտակից . և ինքը դեռ անոնց գրքերուն անուններն անգամ չէր սորլած) :

Հիւանդապահուի՛ք ըլլա՛ւ . — Կը սիրէ հիւանդներուն անարին մօտ հսկել , կարդալ և երգել անոնց : Դրացիին պզտիկը վիզը վէրք մը ունէր . կը սկսի զայն խնամել . բժիշկը վէրքը կը փոխէ , ու կը մեկնի . ինչպէս փաթթել զայն , աղեկը տեսդ ուի , անկողնին մէջ կը տապակի , կը փսխէ , կը ճչէ , վրան գլուխը ազտուէ , ո՞ր մէկը ըսել Աստուած իմ , սաստիկ ջղային կ'ըլլայ ինքն ալ : Կը խորհի Անգլիոյ հիւանդանոցներուն կարգապահութեանը վրայ , կը նայի անոնց պատկերներուն վրայ , ստիտակազգեստ օրիորդներ՝ համբերութեան դրօշմը ճակտերնուն վրայ , ժպիտ ի շրթունս , լուրջ արթուն աչքերով , սիրով կը խնամեն իւրաքանչիւր հիւանդ , պատասպարուած այդ գթութեան յարկին մէջ : Դադանիքը կը լուծուի , սէտք էր Յ-Ն տարիներ այդ տխուր յարկին մէջ մեծ գոհողութեամբ ձեռք ձգել այդ ազնիւ արհեստը : Յաւերժ սպրին այդ գթութեան քոյրերը . . . : Դժուար էր սակայն :

Բժշկուի՛ք ըլլա՛ւ . — Հիւանդութեանց խորը պիտի թափանցեմ , վէրքերու սպեղանի պիտի գտնեմ , հիւժած սրտեր պիտի վերակենդանացունեմ , և երբ հարկը պահանջէ , հոգեկան կոտորումներ ամօքեմ — հիանալի գազափար :

(Հոս սակայն փորձեր մը չկրցար ընել դժբաղդաբար : Անշուք գօլէճի ու մութ հիւանդանոցի մը տրամատեսիլ չէնքերը կը ցցուին երեկայութեանը մէջ . Տ-Տ տարիներու սրտմաշուք աշխատանքը , դիտիներ կտրելը , կենդանիներ ողջ ողջ անդամահատ ընելը , պզտ-գալի հեղուկներ զննելը , վիրահատութեանց ներկայ ըլլալը) : Ախ երեւակայեցէք ուռած աչք մը անբուժելի , ու անա վայրկեան մը ետք գործողութենէն , ցաւալի ու խոր փոս մը միայն կը մնար հոն : Ախտաւոր ձեռք մը , ու վիրաբոյժը արմատախիլ կ'ընէ թեւը ուսէն . . . ո՛հ , ոտքդ պագնեմ հիմա կը մեռնիմ , հեռի՛ , հեռի՛ ինչ այդ առնական անգութ և զազրելի գործը , չըլլալիք բան է : սոսկալի կամքի կորով և քար սիրտ պէտք է :

Ասուպի նման դեռ հաղարաւոր արհեստներ միտքէն կ'անցնին , որոնց հմուտ եղած են Եւրոպուհիներ և Ամերիկուհիներ , ու մեծ աշարջութեամբ առաջ տարած : Անոնցմէ կ'անդրադառնայ մեր փաղաքուշ օրիորդը , և ամէնէն ալ կամացուկ մը կը հրաժարի իւրեն յատուկ պատճառներով , ու ճարահատ հայրը սղջկանը նորանոր ընտրութիւնները լսելէն ձանձրացած , սարսափով կը տեսնէ

տարիներուն յաւելումը իր աղջկան տարիքին վրայ, որուն վրայ գումարելով աղջկան առաւելութիւնները, ու բաղմապատկելով իննայուած դրամովտը, զայն՝ իրեն խանութի դրացի միտերանոցին կրտսեր դրագիրին հետ կ'ամուսնացունէ : ?

Կը մտածեմ, երբ ներկայ դարուս կիներու աշխարհին մէջ հըսկայ յաւաջգիմութիւններ կ'ըլլան ո՞ր ենք մենք, ու կ'եղբակացունեմ որ եթէ դեռ շարունակենք իւրաքանչիւր արհեստի համար աւարկել, անտարբերութեամբ և ծուրօրէն քննել ամէն ինչ, առանց կամքի խորհիլ, առանց մտքի աշխատիլ, առանց սրտի ըզձալ, և առանց հոգիի գործել, կը վախնամ որ Հնդկաստանի մէջ աղջիկ ծնած ատեն սուգ ընելուն պէք, մեր ծնողներն ալ պիտի ստիպուին ողբալ :

U su paqur

ՏՕԲԹ. Ա. ՕՅԵԼԻԱ ՆԵՐԿԱՐԱՐԵԱՆ

## ԿԻՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀԻՆ ՄԷՋ

### ԿԻՆԵՐՈՒ ՎԱՆՔ ՄԸ

Կիներու վանք այս դարուս : Զարմանալի չէք դռներ քիչ մը : Այս է ա՛նա օրուան նորոյթը Պոլսոյ Յոյն հասարակութեան համար :

Կիներու վանք ըսած ատեննիս ակամայ կը յիշենք վիպական դրամագներ, քաղցր ու տխուր պատմութիւններ կեանքին սրգողած էակներու, որոնք կը քաջուին մենաստան մը իրենց անձը նուիրելու երկնային պաշտամունքի :

Բայց այս տեսակ վանք մը չպիտի ըլլայ ծրագրուած վանքը որ պիտի հաստատուի Պուրկազ կղզիին մէջ, թէեւ ոմանք կ'ըսեն թէ Պրնայրի մէջ պիտի հաստատուի, ուր վերջերս աղջկանց որբանոց մըն ալ բացուեցաւ : Այժմ հաւաստուածներուն նայելով կիներու վանքը պիտի դետեղուի Պուրկազ կղզիին այն մենաստանին տեղ ուր ասկից առաջ կ'ապրէր Մարկարիոս անուն ճգնաւոր մը : Այս ճգնարանը պիտի որմափակուի և պիտի վերածուի վանքի :

Յոյն թերթերը իրաւամբ կ'ըսեն թէ Ժամանակագրական սխալ մը չպիտի ըլլայ այս հաստատութիւնը քանի որ անոր նպատակը չպիտի ըլլայ կեանքի դասալիքները կամ ծոյլերը ու չյաջողածները պաշտպանել, այլ ընդհակառակը մարդասիրութեան նպատակի համար գործել : Կիներ ու աղջիկներ այդ վանքին մէջ պիտի սովորին հիւանդախնամութիւն և բժշկական ու սուղջապահական

նախատարերք, պատրաստուելու համար՝ հիւանդապահութեան : Ասոնք «գլխութեան քոյրեր» պիտի ըլլան, և իրենց կեանքը պիտի նուիրեն ցաւեր մեղմելու, վէրքեր ամօքելու, վիրտեր մխիթարելու և արտեր սիրօհելու գերազանցապէս կանայի կոչումին :

**ՎԵՑ ՄԻԼԻՈՆՆՈՑ ԶԳԵՍ ՄԸ!**

Վանքէն ետք «աշխարհիկ» կեանքը, հիւանդապահի սեւ սը-  
քեմէն ետք՝ դիւթահրաչ պերճութիւնները :

Երբ կիները արդուզարդի յիմարներ են, չեն գիտեր թէ ի՞նչ  
հնարեն՝ պճնանքի իրենց հակառակորդուհիները գերազանցելու  
համար :

Անդլիոյ մէջ Տիկին Լոնկթրի Մանեակը խաղին ատեն բեմ ե-  
լաւ 100,000 ֆրանքէ աւելի՝ արժող տարազով մը : Ասիկա սիրուն  
անակնկալ մըն է թատերական ձորձի մը համար, չէ՞ :

Բայց աւելին կայ : Հսոմի Փրանսական դետսպանատան մէջ  
տրուած պարահանդէսի մը ատեն, Ամերիկացի կին մը հագաւ շըր-  
ջազգեստ մը, որուն քղանցքը միայն կ'արժէր 250,000 ֆրանք :  
Այս չնորհազեղ դիցուհին իր ետեւէն կը քաշէր աղամանդներու և  
մարգարիաներու ամբողջ թափոր մը : Երեւակոյցեք այս ամերի-  
կուհին՝ որ ելեկարական լոյսերու ցոյրերուն տակ, երկնագեղ  
մարմններու ճառագայթարձակ պատրանքը կ'ընծայէ :

Պրիւսէլի մէջ, ուրիշ միլիտատարուհի մը կը կրէր տարազ մը  
որուն ժանեակները միայն կ'արժէին 150,000 ֆրանք, այսինքն՝  
Շիքակոյի մէջ չուրջ 3000 . . . խողի գինը : Կարելի չէր իրաւամբ  
չհիանալ այսչափ Փարաւոնեան արդուզարդի մը վրայ, առանց  
հարցնելու թէ ս'երկից էր այդ հարստութիւնը : Բայց այդ կիներ  
աղջիկն էր . . . Միտի Իշխանին :

Հապա ի՞նչ ըսենք այն փոքրիկ ճարտուհիին, Սատա իշխա-  
նուհիին, որ ամուսնացաւ Միքատոյին գաւկին հետ : Այս տարփա-  
գեղ և մանտրաիկ նշանածը իր տիրոջը բնակարանը մտաւ թեթև  
զգեստով մը միայն, որ կ'արժէր . . . վեց միլիոն ֆրանք :

Սակայն տեղ տեղ միլիոնները աւելի նուազ արժէք ունին  
քան կանգունը 8 զրուշնոց շրջազգեստ կրող աղջկան մը աչքերը :  
Կիները այնքան պահանջկոտ են որ, չեն գոհանար գեղեցիկ և սի-  
րուն ըլլալով : Գուցէ չեն գիտեր թէ էրիկ-մարդիկ համեստ զգեստ-  
ները ճշմարտապէս ազնուական կը գտնեն :

**ՏԻՊԱՐ ԽՈՂԱՐԱՐՈՒՄԻ ՄԸ**

Բարեկամուհիներէս մըն անցեալ որ հետեւեալ միջադէպը պատ-  
մեց զոր նոյնութեամբ մէջ կը լսեմ . —

Վարպետ խոհարարուհի մը անցածները կը ներկայանայ Բերա-  
ցի հարուստ ընտանիքի մը :

Տանտիկինը որուն հետ կը բանակցէր խոհարարուհին, ամուսկանը շատ դատաւ :

— Տիկինը թող չզարմանայ երբ ըսեմ թէ, յարեց մեր առաքինի խոհարարը, մինակ ես չպիտի ըլլամ օգտուող . . .

Տիկինը բան մը չհասկցաւ այս խօսքէն թէ և ընդունեց զինքը : Պաշտօնավարութեան առաջին օրն իսկ, եկաւ հաւատարմաբար հաշիւ տալ :

— Նախ տիկին, հաւ մը առի, 10 դրուշի :  
— Լաւ, 10 դրուշ, կ'ըսէ տիկինը և հաշուետարին մէջ կ'արձանագրէ այնպէս :

— Ներեցէք տիկին, կը միջամտէ խոհարարուհին, 1) դրուշ մինակ հաւավաճառին տուի, բայց Բերախի բոլոր մեծահարուստ առններուն մէջ հաւին կը վճարուի 20-25 դրուշ :

— Ի՞նչ, կ'ուզե՞ս որ տասը դրուշ աւելի՞ տամ քեզի համար :  
— Տիկինը չի հասկնար ըսածս, կ'ըսեմ թէ հաշիւին մէջ միայն 10 դրուշ աւելի գրեցէք :

— Ի՞նչպէս, տեսարակին վրայ մի . . . ինչո՞ւ հաւար . . .

— Տիկինին շահուն համար : Տիկինը անշուշտ արդուզարդը շատ կը սիրէ, և իրաւամբ, գեղանի տիկին մը առանց արդուզարդի ի՞նչ կ'արժէ : Իսկ պարոնն ալ գէշ կը նայի այդ ծախքերուն, և ծովը նետուած գրամ մը կը նկատէ ժանեակի, ժապաւէնի, բուռբայի արուած դրամները չէ . . . : Լաւ ուրեմն, տիկինը մէկ հաւին համար 20 դրուշ վճարուց պիտի տայ պարոնին, և տարբերութենէն ինք պիտի օգտուի . . . : Ահեղ լի տասը դրուշը ես չեմ որ կ'աւանտ, հազա մեծ մասը տիկինին կողմէն :

Յետոյ աւելցուց .  
— Իմ նախկին տիրուհիս պէս ասանկ հաշիւ կը տեսնէինք :  
ԱՏՐԻՆԷ՛՛ ՄԻՍԱԲԵԱՆ

### Ա Չ Ռ

Արհեստագիտական վարժարանի նախորդ 3 վարչուհիները իրենց գործառնութիւնները կը շարունակեն Բերա Թագաւիմ, Բում Բապրիսթան փողոց թիւ 26 տան մէջ և կ'ընդունին ձերմակեղէնի վերաբերեալ ամէն տեսակ յանձնարարութիւններ, խիստ գիւրամատչելի պայմաններով :

Յանձնարարութիւնները կ'ընդունուին Յուլիս 10 երկուշաբթի օրէն սկսեալ ամէն Բչ. Դչ. և Ուր. կէս օրերէ վերջ :

Այցելութիւն մը կը բաւէ գաղափար կազմելու համար պատարասուած գործերուն նրբութեան և ճաշակաւոր ըլլալուն և միեւնոյն ատեն զիններուն շախաւորութեան մասին : 3-5

# ԹԷ ԻՆՉՊԷՍ ՊԵՏՔ Է ԱՄՈՒՍՆԱՆԱԼ

Ա. Ռ. Ա. Զ. Ի. Ն. Մ. Ա. Ա

## ԿԻՆ ԱՌՆԵԼՈՒ ԱՐՈՒԵՍՏԸ

### Գ. Ա. ՈՒԹ ՀԻՆՓԵՐՈՐԳ

#### ԶԳԱՑՄԱՆ ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հեղինակ ԲՕԼ ՄԱՆԹԵԿԱՑՑԱ

Մարտարանուրեան ուսուցիչ եւ անդամ Իտալոյ ծերակոյցին

Եթէ երբեք մեծ ու խորունկ սէր մը կը զգաք, եթէ երբեք ձեր մասին մէջ թափանցած է սննդ, եթէ երբեք լաւ ու բաւարար սէր մը կը տածէք, ապահով եղէք թէ խուժերը կտոր կտոր պիտի ըլլան, լեռները պիտի հարկեւին, փուշերը ինքնին պիտի բթանան, որովհետեւ սէրը ամէնէն ճարտար վեճակն է եւ կրնայ մաղձը մեղրի փոխել: Այդ հրաշագործութեան մէջ կիրնը ամէնէն աւելի ճարպիկ կը հանդիսանայ, այնպէս որ շատ կարծրասիրտ, կոտակ, աշխարհիս ամէնէն հակակիր մարդը եղած ըլլալու էք, որպէս զի քանի մը օրուան մէջ ձեր ընկերուհին չյաջողի գլխէ հանել ձեզ: Սակայն սա համոզումը ունեցէք որ ձեռք բերուած ներգաշնակութիւնը պէտք չէ ըլլայ այն զոր ցոյց կուտայ համակերպած զո՞ն մը կամ հլու ստրուկ մը: Արուեստական եւ կեղծ համաձայնութիւն մը պիտի ըլլայ ասիկա, քիչ տեսողութեամբ եւ անարժէք. յամբ ու ճարտար թափանցումով մը՝ ճամբուն խորտուրդութիւնները պէտք է ընդելուզուին խոռոչներով: Մարդկային սովորութիւններն ու ճաշակները բանիմաց եւ բարեացակամ կերպով յարմարելու են միջավայրերուն հետ: Որթատունկի ոտը երբ կապուի, բնաւ ցաւ չզգար. իր բարունակները կարծես հաճոյք կը զգան՝ զիրենք հաստատուն բռնող նեցուկին կապուած ըլլալուն համար, մինչ խաղողի զուարճագեղ ու կարմիր ողկոյզներն ալ ուրախութեան ժպտում մը կ'արձակեն զողջես սարկինային կամ ձողին վրայ: Նմանապէս երջանկութիւնն ալ այնպիսի պտուղ մըն է որ գիտական ու սիրայիլ մշակութեան մը կը կարօտի:

Արիւններու որմնայեցը կը ներկայացնէ այրերը, իսկ որթա-

տունը՝ մեր կեանքի ընկերուհին, որ մեզի հետ զօգուած է սիրոյ կապերով և փոխադարձ ներողամտութեամբ մը:

Ձանացէք ամուսնանալ բարի կնոջ մը հետ, որ ձեզ սիրէ ո՛չ թէ ձեր կրած անունին և ձեր գրամարկզին մէջ գանուած ոսկիներուն համար, այլ ձեզ գեղեցիկ գտնելուն, յարգելուն և ձեր անունը կրելէ հպարտութիւն մը զբալուն պատճառաւ:

Այն ատեն կրնաք վտան ըլլալ թէ նկարագրի փոքր անհաշտութիւնները պիտի հարթուին. ձեր թերութեանց հանդէս՝ ձեր կնոջ ցոյց տուած համբերատար ներողամտութեան մէջ, ամէն օր, ամէն վայրկեան, այնպիսի սիրոյ մը ապացոյցը պիտի անսնէք՝ որ կեանքի վերջին շունչին հետ պիտի անհետանայ:

## Գ Լ ՈՒ Յ Վ Ե Ց Ե Ր ՈՐ Գ

### ՄՏԱԾՄԱՆ ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ի՛նչ կարգի կնոջ հետ պէտք է ամուսնանալ. անմիտ, բանիմաց, ուսումնական:

Եթէ երբեք հանրաքուէով մը հարկ ըլլար լուծել այս խնդիրը, հաւանաբար քուէհամարը սա արդիւնքը պիտի տար, հարիւր հոգիի վրայ հաշուելով:

Անմիտ կնոջ համար 10 ձայն:

Ուսումնական կնոջ համար՝ 0:

Բանիմաց կնոջ (կանոնաւոր իմացականութեան տէր ըլլալու պայմանաւ) համար՝ 90 ձայն:

Ներկայ դարուս մէջ՝ ուր մեծամասնութիւնը կը բռնէ բանականութեան տեղը, խնդիրը պիտի լուծուի այն հանրաքուէովը, որուն արդիւնքը կ'երաշխաւորենք:

Իւրաքանչիւր քուէի հետ պէտք է գտնուին բազմաթիւ ու այլազան մեկնութիւններ, որոնք կրնան դործնական խորհուրդներու վերածուիլ ի պէտս անոնց որոնք կ'ուզեն ամուսնանալ:

Անմիտ կնոջ քուէ տուող տասը հոգին պիտի աւելցնէին թէ ապուշ կին մը ունենալ չեն փափաքիր, այլ սահմանափակ իմացականութեան տէր կին մը, որ շատ ալ տղայամիտ չըլլայ. սակայն պիտի փափաքէին որ այդ թերութեան փոխարէն՝ շատ բարի, շատ երկտասարդ ու շատ զուարթ ըլլայ: Ամէնէն աւելի պիտի մաղթէին որ իրենց կեանքի ընկերուհին միշտ զուարթացնէ զիրենք: Արդ, կա՞յ աւելի հաճելի ու հեշտազուարճ բան մը քան ազուր բերնէ մը արտաբերուած յերիւրուածոյ խօսք մը: Միծայ

առաջ կը բերէ և մեր ծիծաղը կնոջ խնդուքն ալ կը գրգռէ, որ իր ազնոր շարուած և մարգարտի նման ճերմակ ու գեղեցիկ ակ-  
ոանները ցոյց կու տայ մեզի. այն ասուն օրհնեալ ըլլայ սնովոս  
խօսքը ու զայն արտասանող էակը:

Այն իննսուն հոգին որոնք չպիտի յօժարէին քուէ տալ ու  
սուսնական կնոջ, պիտի ուզէին հրապարակել թէ կնոջ մօտ զար-  
գացում տեսնել կը փափաքին, բայց իմաստակութենէ կը խորչին.  
Ի՞նչ որ ալ ըլլայ՝ չպիտի ուզէին պա-պրիս մը իբր կին առնել, և  
ոչ ալ շօսեք-պրիս մը, տեսակին պէսպիսոյթը, որուն առաջինը  
մկրտուած է Օ. ար Պալլաքի կողմէ:

Այս բացատրութիւնները լսելէ յետոյ մենք ալ մերինները  
տանք: — Իտալական ընկերութեան մէջ ընդհանուր զարգացումը  
չատ աւելի ստորին է բազմատմամբ այն զարգացումին որ ընդ-  
հանրապէս կը տեսնուի Ֆրանսայի, Գերմանիոյ, Անգլիոյ եւ Մ.  
Նահանգաց մէջ: Գէթ արիութիւնը ունենանք խոստովանելու այդ  
բանը, սա յոյսը տածելով թէ մեր գէժքերը պիտի չիկնին և. միա-  
քերնին դնելով Իտալացի սղոց այդ վէրքը զարմանել:

(Շարունակելի)

ՄԱԹԻՍ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ

## ՆԻԿՈՂՈՍԵԱՆ ՀԱՆԴԵՍԸ

Ճշմարտապէս շնորհաւորելի հանգէս մըն էր Բանկալթիի Նի-  
կողոսեան աղջկանց վարժարանին կիրակնօրեայ հանդէսը որ տեղի  
ունեցաւ վարժարանին սլարտէզին մէջ, այս առթիւ յատկապէս  
գրոշազարդուած և կանաչազարդուած: Հրաւիրեալներուն սիրալիր  
ընդունելութիւն կ'ընէին վարժարանին տեսուչը և դաստիարակու-  
հիները: Կը նախապահէին Տ. Հմայեակ և Տ. Գէորգ եպիսկոպոս-  
անքը, շրջապատուած վարդապետներէ և քահանաներէ: Բառին  
ճշմարիտ առումովը ընտրեալ բազմութիւն մը ներկայ էր, որ հան-  
դէսին ամբողջ տեսողութեան մէջ ուշադիր և դո՛ հետեւեցաւ բո-  
լոր մանկական սիրուն խաղերուն, մենտիսուութիւններուն և տրա-  
մախօսութիւններուն, որոնք հաճելի պէսպիսութիւնով մը և երա-  
ժըշտական կատրներու ու երգերու ընդմիջումով դասակարգուած  
էին: Վարժարանի սանիկներուն և աշակերտուհիներուն այս տո-  
ղանցութիւնը ակնայայնի կը պարզէին այն հոգածու խնամքը և  
ջանքերը զոր վարժարանին շինապիր համակրելի ամուլը չէին իր-

նայած իրենց յանձնուած սերունդին բարւոք և տիպար դաստիարակութեանը համար: Հանդէսին շահեկան մէկ մասն էր անդեկագիրը, երկու տարուան համարատուութիւն մը, զոր կը հրատարակենք հոս, մեր խոստումին համաձայն:—

## Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

Ուրախ եմ որ պատիւ կ'ունենամ այսօր ներկայացնել նորահաստատ վարժարանս և իր երկամեայ աշխատութեանց արդիւնքը: Դպրոցական գործը, մանուկներու կրթութեամբ և դաստիարակութեամբ զբաղումը, ի մի բան ուսուցանելու և դաստիարակելու աշխատութիւնը անդիմադրելի հրապոյր մը ունեցած է ինձ համար: Դպրոցական իւրաքանչիւր օրուան արդիւնաւոր և խաղաղիկ աշխատութիւնը անբացատրելի հաճոյք մը պատճառած է ինձ, սպիտիկ դեռատի մանկանց անմեղ աշխարհին մէջ և ջանալ լաւ իմացուած կրթութեան և դաստիարակութեան բարերար արդիւնքութեամբ մտաւղ մտքեր մշակել, լուսաւորել և զարգացնել՝ մեծագոյն երջանկութիւնը համարած եմ միշտ:

Այս զգացումներս տարիներու ընթացքին մէջ ևս սուտել զօրացած և արժատացած, միշտ աւելի եռանդ ստած են ինձ նոր ոգւով և ոյժով շարունակելու աշխատութիւններս կրթական սուպարէզին մէջ, նոյն զգացումներս վերջապէս ներշնչեցին ինձ անզուսպ փափաք մը հիմնելու վարժարան մը, ուր կարենամ մասնաւորապէս ի գործ դնել՝ անարգել և անխափան, ինչ որ կը խորհիմ լաւագոյն մանկանց կրթութեան և դաստիարակութեան մասին, ժամանակիս պահանջման համաձայն: Փափաքիս իրագործման համար դիմում ըրի Կայս. Կառավարութեան, որ խրեւթարգման Նորին Կայս. Վեհափառութեան երկրաշէն խորհրդոց հաճեցաւ այս վարժարանը հաստատելու պետական արտօնութիւնը շնորհել ինձ՝ երախտապարտ թողլով զիս: Եւ արդ այս երկրորդ տարին է որ կը բոլորէ վարժարանս, Կայս. Կառավարութեան հովանաւորութեան տակ:

Վարժարանիս գլխաւոր նպատակն է ըլլալ մանուկոտպէս հայ աղջկանց յատուկ բարձրագոյն կրթարան մը, ունենալով միեւնոյն ատեն մանչերու համար միայն՝ նախակրթարան մը և մանկապարտէզ մը երկսեռ փոքրիկներու համար:

Աւելորդ է անշուշտ բացատրել աղջկանց դաստիարակութեան աւագ կարեւորութիւնը: Իգական սեռին, ավագայ մայրերու, էապէս կրթիչ և և դաստիարակիչ դերը նկատողութեան առնելով, որքան ուշադիր, խնամուած և կատարեալ դաստիարակութեամբ օժտուի այն, այնքան աւելի կարող կ'ըլայ գիտակցութեամբ և

յաջողութեամբ ի գլուխ հանել իր դերը: Հայ ծնողք անփոյթ չեն գտնուած օժտելու իրենց զաւակները, աղջիկ թէ մանչ, նպասակայրմար կրթութեամբ եւ դաստիարակութեամբ, և առ ի չգոյ՛հ Հայ հաստատութեան մը, ուր որ դատած են իրենց գոհացում տալու հանգամանքով ներկայացող կրթական հաստատութիւն մը, չեն վարանած հոն դիմելու:

Եւ ահա վարժարանս կուգայ լրացնելու պէտքը աղջկանց բարձրագոյն կրթութեան յատուկ Հայ հաստատութեան մը, որուն բացումը տեղի ունեցաւ 1904 Նոյեմբերի առաջին օրը: Առաջին տարեշրջանիս մէջ ընդունեցանք թէ՛ մանկապարտէզի և թէ՛ նախակրթարանի մէջ ընդամէնն 45 երկսեռ աշակերտներ, որոնցմով կազմուեցան մանկապարտէզը և նախակրթարանի նախապատրաստական Ա. և Բ. դասարանները: Վերջացող երկրորդ տարեշրջանիս մէջ աշակերտաց և աշակերտուհեաց թիւը բարձրացաւ 90 ի եւ կազմուեցան մանկապարտէզի երկու դասարաններէն զատ, Նախակրթարանի նախապատրաստական, Ա. և Բ. Գ. Դ. և Ե. դասարանները: Նախապատրաստական, և Ա. դասարանաց մէջ աշակերտք և աշակերտուհիք միացեալ հետեւած են դասախօսութեանց. իսկ Բ. րդ և Գ. րդ դասարաններէ սկսեալ մանչերն և աղջիկներն առանձինն դասարաններու մէջ զետեղուած և առանձինն հետեւած են դասախօսութեանց, այս կերպով Նախակրթարանի մէջ, սկսեալ նախապատրաստական դասարանէ մինչև Ե. րդ դասարանը, ձեւացան 7 դասարաններ:

Տարեշրջանիս մէջ ընդունուեցան նաև 8 այցելու աշակերտուհիներ, որոնք հետեւեցան ձեւագիտութեան, նկարչութեան, և Հայերէն, Պրանսերէն ու Անգլիերէն լեզուներու դասախօսութիւններուն: Այս 8 աշակերտներն ալ միասին հաշուելով՝ Բ. րդ տարեշրջանիս մէջ աշակերտաց եւ աշակերտուհեաց համագումար թիւը յանգեցաւ 98 ի: Ներկայացող աշակերտաց ուսումն. կարողութիւնը շատ աչքի զարնող երեւոյթ մը կը պարզէր մեր առջև: Նախնական ուսման հետեւելու յարմարագոյն տարիքի մէջ և տարիքով քիչ մը աւելի իսկ յառաջացած աշակերտուհիներ և աշակերտներ, մտացի և աշխոյժ, թարմ մտքով և առոյգ մարմնով, ծարաւի ուսման և աշխատութեան, դեռ սկսած իսկ չէին ուսանելու զբաղիլ, որոնց դեռ մայրենի լեզուի նշանազրկին իսկ անձանօթ էին մնացած, և որոնց զանց առնուած էր կրօնական և եկեղեցական ուսմանց և պարտաւորութեանց ուսուցումը, ինչպէս ուսման վերաբերող միւս կարեւոր գիտելիքները, գոգցես սպասելով ընդունիլ ընտանի ջերմոցի մը, ծաղկոցի մը ջերմիկ ճառագայթները ծրլելու, բողբոջելու և զարդանալու համար. և այս պարագան ինք-

նին՝ աւելի հաւատք ներշնչեց մեզ մեր ձեռնարկին կարեւորութեան նկատմամբ և աւելի տողորեց զմեզ նոր եռանդով փարելու մեր առջեւ բացուած նոր ասպարէզին մշակութեան :

Արդ՝ սկսանք դասախօսութեան յատկապէս յորինուած ծրագրի մը համաձայն . ուսմանց ամէն առարկաներն ալ դասախօսուեցան և դասախօսութիւնները ինչպէս նախորդ , նոյնպէս այս երկրորդ տարեշրջանիս մէջ անխափաս կանոնաւորութեամբ տեղի ունեցան ուսուցչական կարող և փորձառու խումբի մը աջակցութեամբ : Գասախօսութեանց աւարտումէն վերջը կատարուեցան տարեկան հարցաքննութիւնները , որոնց ներկայ գտնուեցան հասարակաց կրթութեան նախարարութեան կողմէ Էօմէր Նազիմ էֆէնտի եւ Ա.մեն . Ս . Պատրիարք Հօր կողմէ Տ . Բաբգէն Մ . վարդապետ , ինչպէս նաեւ եկեղեցական հայրեր , բաղմաթիւ ծնողք և բարեկամք հաստատութեանս :

Չեմ ուզեր խօսիլ երկու տարեշրջաններու արդիւնքին վրայ . միայն կրնամ ըսել թէ խղճի մտօք կատարեցինք մեր պարտականութիւնները և մեր ստանձնած գործը կատարեալ ընելու համար ո և է ջանք և զոհողութիւն չխնայեցինք : Կը յուսամ որ կը բաւեն ազնիւ ծնողաց և քննութեանց ներկայ գտնուող ձեռնհաս անձերու վկայութիւնները և գոհացումները վարժարանիս արդիւնքի մասին : Իսկ անոնց որոնք անտեղեակ են վարժարանիս արդիւնքին , ինչպէս նաեւ անոնց որոնք իրենց զաւակաց կրթութեան էական մասը կը համարեն եւրոպական լեզուի մը ըստ արժանւոյն ուսումը , կը յայտնեմ իբր ապահովութիւն թէ վարժարանիս մէջ աշակերտ մը կամ աշակերտուհի սկսեալ մանկապարտէզի շրջանէն ուսման և նախակրթութեան անհրաժեշտ գիտելիքներուն տիրանալու առաւելութիւններէն զատ շատ գիւրաւ և շատ հիմնաւոր եղանակաւ պիտի ուսանի ո և է եւրոպական լեզու , Ֆրանս . , Անգլ . կամ Գերմաներէն , այն ուղղութեամբ և հոգածութեամբ , որոնցմով մեր ուշադրութեան և խնամքին առարկայ ըրած ենք յատկապէս այս պարագան , աջակցութեամբ հմուտ ուսուցիչներու եւ ուսուցչուհիներու , Հայ թէ Եւրոպացի :

Ուրախալի պարագայ մըն է պիտել տալ թէ մեր բոլոր կարգերու աշակերտուհիներն և աշակերտները փութաջանութեամբ աշխատեցան իրենց դասերուն և այնչափ յաջողակութիւն ցոյց տուին որ գրեթէ առանց բացառութեան ամէնքն ալ յաջողած են իրենց դասարանները փոխել և բարձրանալ յաջորդաբար առաջինէն երկրորդ , երկրորդէն երրորդ , մինչև հինգերորդէն վեցերորդ : Ուստի կրնամ յայտարարել թէ յառաջիկայ տարեշրջանէն վերջ՝ վարժարանս ի վիճակի պիտի ըլլայ ընծայելու ազգին նախակրթարանի իր

առաջին չրժանատարաները . իսկ այսօր սոյն գպրոցական հանդէսը կազմակերպելով , կը փափարինք վարձատրել և քաջալերել մեր աշակերտութիւնները և աշակերտները իրենց ցոյց տուած եռանդին , պարտաճանաչութեան և աշխատասիրութեան համար , որով արդիւնաւորեցին իրենց ուսուցչուհեաց և ուսուցչաց ջանքերը . հաճոյքով կը դիտենք որ աշակերտութիւնք և աշակերտք սիրեցին իրենց վարժարանը , և սպրեցան հոն իրրև քոյրեր և եղբայրներ ընտանի յարկի մը տակ :

Վերջացնելէ առաջ կը փութամ շնորհակալութիւնս յայտնել տա Սմեոն . Սրբազան Պատրիարք Հայրն որ հաճած է օրհնել և քաջալերել մեր ձեռնարկը և իր համակրութիւնը անպակաս ըրած է հաստատութեանս մասին :

Շնորհակալութիւնս եկեղեցական հարց և ազնիւ բարեկամաց որոնք հաճեցան ներկայ գտնուիլ վարժարանիս տարեկան քննութեանց և իրենց համակրութեամբ և զնահատումներով քաջալերեցին դմեզ :

Շնորհակալութիւնս ազնիւ ծնողաց որոնք իրենց սրբւոյ կրթութեան և դաստիարակութեան ինամքը մեզի վստահեցան և հոնդիսականացդ որ հաճեցաք ձեր ներկայութեամբ պատուել սոյն հանդէսը :

Շնորհակալութիւնս կը յայտնեմ վարժարանիս յարգելի ուսուցիչներուն և ուսուցչուհիներուն որոնց անձնուէր և խղճամիտ աշխատութիւններով վարժարանս բոլորեց իր երկամեայ բարեկարգ և արդիւնաւոր չրժանը :

Փամ է արդ շնորհակալութեանս և երախտագիտութեանս անժրխտելի հարկը մատուցանել յոտս Նորին Կայս . Վեհափառութեան որ իր կայսերական հոգածութեան առարկայ ըրած է իր հաւատարիմ հպատակաց կրթութեան և բարւոք դաստիարակութեան գործը , որ հեռզհեռէ կը ծաւալի և կը բարգաւաճի իր ընդարձակ կայսրութեան ամէն երկիրներուն մէջ : Հաստատութիւնս ալ թանկազին մէկ շնորհն ըլլալով Նորին Վեհափառութեան հպատակասիրութեան և կրթասիրութեան , ինչպէս միշտ , իմ վայելած այս շնորհիս առթիւ եւս բարեմաղթող եմ Նորին Կայսերական Վեհափառութեան կենաց երկարութեան , և կը դռչեմ

Յոււերմ կեցցէ՛ սիրեցեալ կայսրն մեր ԿԱԶԻ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏԻՎ-ՀԱՄԻՏ ԽԱՆԸ՝ ՍԱՆԻ :



Սիրուն զոսս ծունկիս վրայ կը սիրեմ միշտ օրրեջ քեզ.  
Միտք ուշիւ պիտի փորձեք քափանցելու մեղմապէս  
Սորհուրդի մը շուրջ, մանկունակ: Եւ երազը անկայուն  
Քու աջերեկոյ իմիկներուն կը սլանայ զերդ քրոջուն:

Հաղորդելու համար միայն իղձերն անմեղ սիրեանուն՝  
Որք կը քուիկն պարեզի մը երկեակ ծաղկունքն անուրաքոյ  
Մեկը՝ բացուած բուրումնաւեք, միւսն աչ ծըշած անշքունք  
Մեկն իրարու կը խառնենք մեր միտքը, հոգին ու մեր շունք

Հոգոյս միակ սերը անքիծ, կ'զգամ հանդեպ օրրոցին  
Որուն հեշտին քելերը անուրք արքիս ցանցիկն հիւսեցին.  
Լեցուն կուրծքերս են աչ պարապ... աչ քեզի չեմ դիտեցներ  
Բայց՝ մանկութեան քարն օրերունդ երբ կարմրուկ քու  
շուրքներ

Կը ծծեիկն իմ արիւնս որ կեանք դեւեր մարմնիդ մեջ  
Կը զգայի քե քուած ենք մենք, միայնորհուրդ, միասենք:

Մեկզմեկու վրայ մենք չենք խօսիր շատ հեղ... Ի՞նչ խօսիկն  
Քաղցրիկ ժպիտ, զիրք ակնարկ մը եւ համբոյր մը անուշիկ  
Բաւ չե՞ն զիրար հասկնալու, ու պաշտելու ա՛յ համար  
Սիրուն զոսս, հա՛սկն ես ա՜տք, աղիքներուն երկն արդար:

Թարգմ. Ա.ՐԱՔՍԻ Կ. ՊՕՏԻԿԵԱՆ

ՍՍ.ՈՍ. ՊԵՐՆԱՌ. ՊԱՏԻՈՅ ԼԷԳԻՈՆԻ ԱՐԺԱՆԱՅԱԾ

Գեղարուեստից նախարարին յանձնարարութեամբ Պատուոյ  
Լէգէոնի խաչ շնորհուեցաւ Սառա Պէրնաուի: Պատուոյ Լէգէոնի  
խորհուրդը բաւական զմուտարութեամբ միայն կարելի եղաւ համո-  
զել, որովհետեւ մինչեւ հիմա ո՛չ մէկ դերասանի կամ դերասա-  
նուհիի Պատուոյ Լէգէոն տրուած էր իրր այն միայն, այլ դերա-  
սանութեան հետ կցուած կ'ըլլար ուրիշ յատկութիւն մը, զոր օրի-  
նակ, ուսուցչութիւն, են: Բայց սկզբնաւորութիւն մը եղած էր  
արդէն Տիկին Պառթէի հետ, որուն պատուանշան շնորհուեցաւ իրբեւ  
դերասանուհի միայն: Աւելի տրամաբանական պիտի ըլլար սկսիլ  
Սառա Պէրնաուէն, բայց տիկին Պառթէ կը վերաբերի Բօմբարի մը-  
ուանսէզ պետական թատրոնին:

# Ն Ի Ն Ի Ի Ն Օ Ր Ա Գ Ի Ր Ը

Մ Ե Ն Ա Կ Օ Ս Ա Ի Թ Ի Ե

ԵՐԵՒԱՆԹԻ

Երեւակայեցէք տասնըօրս հատ քեռորդիներ ունենալ : Ահա եւ լի թիւ մը որ մտածելու կարողութիւնս կը խանգարէ շատ անգամ : Չեմ գիտեր աղէկ մը, սակայն, սանկ մը կը յիշեմ թէ դժբաղդ օր մը ինքզինքս չըջապատուած գտայ ատոնցմով : Մօրեղբայր ըլլալ . . . բայց հազար անգամ զըջացեր եմ . . . եթէ կարենայի այդ իրաւունքս ծախել ուրիշի մը . . . կեանքիս երջանիկ օրը պիտի ըլլար այդ օրը :

Պղտիկութիւննին տեսակ մը անհեթեթութիւն : Այլ մտիկ ընելու է, զիտե՞ս մօբար Աշոտին աչքերը քու աչքերուդ կը նմանին : Աղէկ, կը պատասխանեմ սիրտս նեղուելով, որովհետեւ իմ աչքերս շատ անուշ կը գտնեմ բաղդատմամբ անոր ապուշ աչքերուն : Ուրիշ օր մը նորէն «գիտե՞ս մօրեղբայր Փառանձեմին բերանը քու կինիդ կը նմանի» ըսելով ճճուակերուս վրայ կը դնեն անուկի բերնով աղջիկ մը . . . Աստուած իմ անոր ալ մօրեղբայրն եմ, և բերանն ալ իմինիս կը նմանի եղեր . . . :

Հոպա մեծնալնին . . . պէտք է որ մէյմէկ դպրոց դնեմ իւրաքանչիւրը, մօրեղբայրնին եմ, ինծի կը վայլէ եղեր . . . աս ալ բան մը չէ . . . դոնէ դպրոցակիսն եղած ատենին հանգիստ չնչեցի . . . անկէ ետքը՝ տեսէք թէ ի՞նչ ձիւներ բերաւ զլսուս այդ անտանն լի տասնըօրս թիւը . . . : Հոգիս բերանս եկաւ, ատոնց չըջանաւարտ եղած ատեննին : Աղէկ, այսօրուան պէս կը յիշեմ որ՝ երեք զոյգ կօշիկ հինցուցի, ոտքերս կոշտերով ծածկուեցան՝ Գննիչ Յանձնաժողովին անդամներուն երթալ գալով : Կ'ողաչեմ սա մեր Փառանձեմին վկայական մը տուէք, կը ինդրեմ որ մեր Աշոտին քրննութեանց սխալներուն շատ ուշադրութիւն չընէք, կիրակոս սքանչելի տղայ մըն է, չափազանց զգայուն՝ չըլլայ որ մերժուիմ կը հիւսնադանայ վիշտէն . . . : Այլ ս'ըջափ խօսք, ս'ըջափ պաղատանք թափեցի այդ ուղղամիտ մարդիկը համոզելու համար : Սակայն անկեղծօրէն ըսելով, պէտք է խոստովանիմ որ չափազանց յաջողակութեամբ տասնըօրս քեռորդիներս ալ վկայեալ չըջանաւարտներ եղած են չնորհիւ քննիչ յանձնաժողովներու ներողամտութեան :

Սակայն . . . ետքէն . . . : Օ՛հ, աղջիկներու օժիտն ալ ես պէտք է որ խորհիմ, մօրեղբայրնին չե՞մ մի . . . Տէ՛ր իմ, ի՞նչ փորձանք է եղեր մօրեղբայր ըլլալը . . . : Մանչերուն ապագան . . . դարձեալ ես

խորհիմ պիտի : Ահ , շուկան որքան ծանօթ սեղանաւորներ , որքան անծանօթ վաճառականներ որ կը ձանձնացի , ամէնուն ալ մէկմէկ կաղանդէք տուի քեւորդիներէն . . . : Ի՛նչ ընեմ , արուեստ մը , գործ մը ունենալու եմ , իսկ եթէ չունենան , յանցաւորը ես կը նկատուիմ դարձեալ : Վերջապէս մօրեզբայր ըլլալուս համար այնքան տառապեցայ որ . . . երկրորդ գալստեանս այդ իրաւունքով երբեք պիտի չվերածնիմ :

Յետոյ , միտքս դրած եմ որ՝ ըստ հարստութիւնս որ մեծ գումար մը չէ , սանկ հինգ հազար սակիլի մօտ աննշան լան մը , չծերացած բոլորովին սպառել , որպէս զի այդ անխճեալ տղաքը զիս ծերութեանս մէջ խնամել ստիպուին : Եթէ սակիներուս ձայնը լսեն . . . ապահով եմ որ պիտի ուզեն որ կանուխ մեռնիմ . . . անանկ չէ՞ , որպէս զի ետքէն արժանաւոր ժառանգորդներս ըլլան : Երբեք ինձի չափ անձնուէր մօրեզբայր մը չեմ տեսած տակաւին , տասնըչորս քեւորդիներուս ալ ազազան պատրաստեցի , ոմանք ա՛մուսնացնելով , ուրիշներ գործի գնելով . . . չէ՛ , շիտակը սակիներս ալ չեմ կրնար թողուլ որ ծուլօրէն , հանդիստ մը ուտեն :

Եթէ չուս մեռնիմ — ինչ որ չեմ կարծեր — ամէնքն ալ եկեղեցիի մը կը կտակեմ , զոնէ ասանկով նշանաւոր բարերար մը կը հանդիսանամ , չէ՞ :

Ն Ի Ն Ի

## Լ Է Տ Ի Ք Ը Բ Զ Ը Ն Ի Մ Ս . Հ Ը

Հնդկաստանի նախորդ փոխարքայ Լորտ Բըրդընի կինը՝ Լէտի Բըրդըն մեռաւ : Լէտի Բըրդըն անգլիական բարձր դասու կիներուն մէջ աչքաուու տեղ մը կը գրաւէր : Ծագումով ամերիկացի էր : Հայրը , Մբ . Լէվի Ն . Լէյթըր , Շիքակօյի ամէնէն ծանօթ միլիառատէրներէն մէկն էր : Միս Միլի Վոլճինիա Լէյթըր 1895ին ամուսնացաւ Նաթանիէլ Ճօրճ Բըրդընի հետ Ուաշինկթընի մէջ , այն տարին իսկ երբ ամուսինը արտաքին գործոց խորհրդական կ'ըլլար : Չորս տարի յետոյ , ամուսնոյն հետ կը մեկնէր Հնդկաստան , գաղթային վարչութեան ամէնէն փայլուն դիրքը դրաւելու համար : Ճարտարութեամբ ելաւ իր փափուկ պաշտօններուն մէջէն : Բայց Հնդկաստանի կլիման անյարմար գալով՝ Լէտի Բըրդըն ստիպուեցաւ Անգլիա դառնալ : Երկու տարի առաջ ծանրապէս հիւանդացաւ և բոլորովին չաղէկցաւ այլ եւս : Լէտի Բըրդըն իր հետ բերաւ մեծ դրամածիտ մը , որուն չնորհիւ կրցաւ տերճ կեանք մը վարել Հնդկաստանի մէջ : Երեք դեռաստի աղջիկներ կը ձգէ :

# ՀԱՇՈՒԱԿԱՆ ՀԱՆՃԱՐ

1. 2. 3. 4. 5. 6. 7. 8. 9.

Առէք այս թիւերէն մէկը. բաժնեցէք զայն հաւասարապէս մնացեալներուն. յետոյ, ի՛նչ կ'ընէք ըրէք, այնպէս մը շարեցէք զանոնք հետեւեալ 9 քառակուսիներուն մէջ որ, ամէն կողմէ եւ անկիւններէն զուամարտելով առեւտրական տարին պատկերէ:

Մեր այս հարցումին ցարդ պատասխան մը ստացած չլլալով, կը հրատարակենք լուծումը որ հետեւեալն է:

## Լ Ո Ւ Ծ Ո Ւ Մ

9 թիւը առինք եւ տեղը մնաց 0: Բաժնեցինք զայն մնացեալներուն եւ ունեցանք 2. 3. 4. 5. 6. 7. 8. 9. 1: Ասոնց ամէն մէկը 24ով բազմապատկելով արտադրեալը դրինք, պահանջման համեմատ, հետեւեալ 9 անկիւններուն մէջ, որոնց զուամարը կը պատկերէ ամէն կողմէ եւ անկիւններէն 360, որ է առեւտրական տարին:

	144	24	192	=360
	168	120	72	
360=	48	216	96	

## Բ Ո Պ Է Ր Գ Գ Ո Լ Է Ճ

Վարժարանիս յառաջիկայ տարեշրջանը կը սկսի 28/10 Սեպտ. Բշ. որ: Կարգադրութիւններ եղած են վաճառականական ուսումը բազմացուած կատարելութեամբ աւանդելու համար: Վարժարանիս մասնաւոր բժիշկը՝ ուսանողներու առողջութեան, մարմնաւարդներուն եւ խաղերուն, ինչպէս նաեւ վարժարանիս ընդհանուր առողջապահական վիճակին վրայ կը հսկէ: Մարմնամարզի նոր եւ դեղեցիկ մասնաւոր շէնք մը կ'առուցուած է նորոգապէս, իր մէջ ունենալով մարմնամարզի ամէն տեսակ գործիքներ, վերջին դրութեանց համաձայն: Երեք տարիէ ի վեր բացուած է նաեւ փոքր շէնք, ուր կ'ընդունուին մինչեւ 10 տարեկան աշակերտներ:

1-8

**ՀԱՅՈՒՆԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ**  
**Ա Տ Ա Բ Ա Չ Ա Ր**

Այս վարժարանը, զոր կը վարեն ինն անդամներէ բաղկացած Խնամակալութիւն մը, և ընդ իսկ ու Ամերիկացի 11 ուսուցիչներէ կազմուած ձեռնհաս ուսուցչական խումբ մը, հիմնական դաստիարակութիւն մը կուտայ բոլոր իրեն դիմող հայ աղջիկներուն: Կ'աւանդուին բնական, իմաստասիրական, չափական և այլ գիտութիւններ: Մասնաւոր ոյժ կը տրուի հայերէն և անգլ. լեզուներուն. կ'ուսուցուին նաեւ թուրքերէն եւ ֆրանսերէն լեզուները: Վարժարանին երկու ընդարձակ եւ օդաւէտ շէնքերը, ինչպէս նաեւ խնամակալութեան երկու բժիշկ անդամները մեծապէս կ'ապահովեն աշակերտուհիներուն առողջութիւնը: Անատուրուի Երկաթուղին, որով մէկ մասնագիծը մինչեւ քաղաքս կ'երկարի, ճամբորդութիւնը խիստ զիւրիւն եւ հաճելի կ'ընծայէ: Գիշերօթիկներու տարեթոշակն է 12 օսմ. ոսկի, զոր երկու մասնավճարով պէտք է հատուցանել: Գաշնակի դասի համար 5 կամ 3 ոսկի կը պահանջուի, գասառութեան թիւին համեմատ: Երգեհոնի դասի համար 2½ ոսկի կը պահանջուի: Վարժարանին Ի. Թ. տարեշրջանը կը սկսի Սեպտ. 12 (Ն. Տ.), Իշ. իրիկունը: Վարժարանին նոր յայտագիրն ուղղորդներուն ձրի կը շրկուի:

Աւելի տեղեկութեանց համար գիմել Մր. Բիթի, Պայպըլ Հաուս, Գ. Պոլիս. կամ գրել Տոքզ. Ս. էֆ. Գավալճեանի, Ատեւնապետ Խնամակալութեան, Ասաբաղար: 1—12

**ՀՈՉԱԿԱՒՈՐ ԱՏԱՄՆԱԲՈՅԺ**

**Խ Ա Չ Ի Կ Ժ Ա Մ Կ Ո Չ Ե Ա Ն**

Պօլիս, Պանչէ Գարու Պողաջաճիին դէմ, Սթանպոլ խան  
Թիւ 4, 5, 6,

Մայրաքաղաքիս ատամնարուժական դասին մէջ պատուաւոր դիրք մը գրաւող Խաչիկ էֆ. Ժամկոչեան, այս անգամ Եւրոպայէն ու Ամերիկայէն յատկապէս բերել տուած նոր դրութեամբ գործիքներով և իրեն յատուկ եղող ճարտարութեամբ, առանց սեւէ ցաւ զգացնելու, ակնթարթի մէջ կը հանէ փտտած և ամէնէն դժուարին ակոսները: Առջեւի փտտած ակոսները առանց հանելու արմատներու վրայ կը զետեղէ բնականէն բնաւ տարբերութիւն չունեցող պտուտակաւոր ակոսներ: Բերնին ետեւի կողմը լեցուիլը անկարելի եղող արմատներու վրայ, ոսկի կամ բլաթին քուռօններ կ'անցընէ: Նաեւ քառլուի, բլաթինի, ոսկիի վրայ շարուած ակոսներ կը շինէ բնականին յար եւ նման:

Խաչիկ էֆ. Ժամկոչեանի սկզբունքն է

Պատուաւորութիւն, Ռ.դամտութիւն եւ Մարքութիւն ինչ որ անհրաժեշտ պայմաններ են ատամնարոյժի մը համար:

**Չ Ա Փ Ա Ի Ո Ր Գ Ի Ն**

Վկայեալ աղքատաց ձրի 36—50

# ՓԱԼԱԳԱՇԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ ԱՂԶԿԱՆՑ

Գ Ի Շ Ե Ր Օ Թ Ի Կ Ե Ի Յ Ե Ր Ե Կ Ե Ա Յ

Հաստատուած 1901 Մայիս 1ին

Գաղղղիդ, Մեծնիրուար ձատուկսի

Բանիմաց ծնողաց դնահատման եւ քաջաբերութեան մէջ հինգ արգիւնաւոր տարիներ յաջողութեամբ բոլորելով, վարժարանս մըտած է իր ՅՐԳ ՏԱՐԵՇՐԶԱՆԻՆ մէջ, իրրեւ Բարձրագոյն Վարժարան Աղջկանց:

Վարժարանս հաստատուած է նորագոյն յայնարձակ եւ օգտաւն շէնքի մը մէջ, որ իր ներքին բաժանումներովը եւ օգուէտ գիրքովը ալ դպրոցական ամէն յարմարութիւն կը միացնէ իր մէջ, գիշերօթիկ եւ ցերեկեայ աշակերտուհեաց համար հանգստուէտութեան եւ առողջապահիկ ամէն պայման լրացնելով: Կ'աւանդուի առճօյն լուրջ կրթութեան մը հետ՝ լեզուաց (Թուրք. Հայ. Ֆրանս. Անգլ.) եւ գիտական անհրաժեշտ ծանօթութեանց հիմնական ուսումը: Ֆրանսացի եւ Անգլիացի կարող վարժուհիներ իրենց յատուկ խնամքին եւ հոգածութեան առարկայ ըրած են Ֆրանս. եւ անգլ. լեզուաց խօսելավարժութիւնը (բուսիք): Չեանհաս ուսուցիչներու եւ վարժուհիներու ընտիր խումբ մը ստանձնած է գործադրութիւնը ուսմանց Մրագրին որ կազմուած է շատ նպատակաւարմար կերպով՝ աղջկանց խնամեալ եւ հիմնական կրթութեանը համար: Մասնաւոր խնամքով կ'աւանդուին նաեւ Առանին Տնտեսութիւն, Կար ու Չեւ, Ասեղնագործութեան զանազան տեսակները (ձեռքով եւ մեքենայով), նաեւ ձայնական եւ գործիական երաժշտութիւն, մասնաւորապէս Դաշնակ: Գիշերօթիկներու համար կատարեալ սնունդ եւ ընտանեկան անթերի խնամք: Վարժարանս, իր տարեկան որոշեալ թղապէն դուրս, չունի կարգ մը օտար վարժարանաց յատուկ այն բացառիկ ծախքերն՝ որոնք տարւոյն վերջ պատկանելի գումարի մը կը յանգին:

Տարուան որ եւ է եղանակի մէջ նոր աշակերտուհի կ'ընդունուի: Վարժարանին Յայտագիրը փափաքողոց կը զրկուի: Բանակցութեան համար պէտք է գրով կամ անձամբ զիմել առ Հիմնադիր-Տնօրէնն կամ առ Տեսչուհին ի վարժարան:

Աշակերտուհեաց վերամուտը տեղի պիտի ունենայ 1 Սեպտ. Ուր., իսկ դասերու սկզբնաւորութիւնը՝ Սեպտ. 4 Բշ.:

Տեսչուհի  
ՕՐ. ՀՐ. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ

Հիմնադիր-Տնօրէն  
Յ. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ

